

զօրանալու և Տաճկաստանէ անկախ
ըլլալու մեծ ճիգն ունի:

Ի Սպանիա 1872 տարին վատահամ-
բաւեցաւ կարողութեանց, հասարակա-
պետականաց և հիմա ալփոնսեանց
խառնակութիւններովն, և կրկին դա-
ւաճանութեամբք ընդդէմ կենաց թա-
գաւորին: Ամէտէոյի ընդ մէջ երկրին
ճանապարհորդելը զինքը չընտանեցուց
ժողովրդեան, որչափ ալ ինքը ժողովրդ-
դական, ազատամիտ և վեհանձն երե-
ցաւ: Երեք անգամ պաշտօնակալաց
փոփոխութիւնք. մէկ տարւոյ մէջ կըր-
կին անգամ լուծումն քորդէս ժողովա-
վարանին: Որոշումն վերանորոգու-
թեանց՝ այլ ոչինչ գործադրութիւն. ա-
զատութիւն գերեաց 'ի Բորդոյ — Ռիբ-
քոյ. այսպէս խստութիւն ֆուպայի
նկատմամբ՝ ուր վտարանջութիւնը կը
չարունակուի, և թերեւս յաղթական
իսկ հանդիսանայ: Թագաւորն առանց
արմատոց է ազգին մէջ. ազատասէր
կուսակցութիւնը նոր քորդէս ժողովով
'ի վարչութեան, այլ անհամաձայն ազ-
գին մեծ մասին հետ: Անհամաձայնու-
թիւն վատիկանու հետ: Հասարակաց
նոր պարտք և տէրութեան սնանկանա-
լուն մեծ վախ: Տարին ձախողապէս
կնքուեցաւ և 1873ս պայծառ չիշողաց.
Ամէտէոյ հաստատամիտ է ըստ չափոյ,
Եւրոպա սրտոտ է ու աներկիւղ:

ՅԱմերիկա՝ Կրանդ դարձեալ ընտ-
րուեցաւ. իւր ախոյեանն Կրիլէ մեռաւ:
Չեղծումն ծայրայեղ: Արուեստական և
վաճառականական սոսկալի գողօնք,
այլ ամենամեծ զարգացումն. հասարա-
կաց պարտքն գրեթէ 300 միլիոն պակ-
սեցաւ անցեալ տարւոյն մէջ: Հնդիկն
ժուարէզ՝ Մէքսիկոյի նախագահը մե-
ռաւ, սակաւագիւտ քաջասրտութեամբ
և ուժգնեղութեամբ մէկը:

Ճիարոն միշտ աւելի ևս կ'երոպա-
կանայ: Չինաստան ամեն տարի քիչ
մ'աւելի կը կը բացուի 'ի գործ ճեր-
մակ ցեղին. բիւրաւոր ու միլիոնաւոր

աշխատաւորներ կը դրկէ 'ի Հնդկաս-
տան և յԱմերիկա:

Այս է կըցկըտուր դամբանական ան-
ցելոյ 1872 ամին:

1873 Յունուար 2.

ՈՒՄՊԵՐԴՈՒՆ ԻՇԽԱՆԻՆ

ԲՐՈՒՍԻՈՅ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻՈՅՆ

ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ԸՐԱՄ ՊԱՐԳԵՆԸ

Գերմանիա և Իտալիա երկու կարող
և մեծամեծ ազգեր, երկար դարերէ 'ի
վեր բարոյապէս կամ նիւթապէս օտար
ազգաց տակ ընկճեալ, վերջապէս թօ-
թափեցին իրենց վրայ ծանրացած լու-
ծերն և ձեացան առանձին ազգ և թա-
գաւորութիւն: Այս երկու ազգերն թեր-
եւս իրարու ձեռնտուութեամբ լուծե-
րին թօթափելնուն, կամ արդի աշ-
խարհագիտութեան այդ կերպ պահան-
ջելուն, մեծ համակրութիւն և սէր ու-
նին իրարու վրայ, որ թէպէտ բազում
առթից մէջ տեսնուեր էր, բայց աւելի
ևս ստուգուեցաւ երբ անցեալ տարի
Բրուսիոյ թագաժառանգ իշխանին որ-
դի մը ծնանելով, այս պատեհաւ հրա-
ւիրեց Իտալիոյ թագաժառանգ իշխանն
ունելու զերախայն յաւազանի մկրտու-
թեան: Ումպէրդո բնականաբար չէր
կրնար մերժել այս հրաւերքը, ուստի
ընդունեցաւ և գնաց 'ի Պետլին, ուր մեծ
ընդունելութիւն գտաւ: Այս հանդիսին
առթիւ, 'ի նշան Իտալիոյ առ Գերմա-
նիա ունեցած մեծ համակրութեանը,
Ումպէրդո գերազանց պարգև մ'ըրաւ
իշխանուհւոյն, որ կը բաղկանայ պսակէ
մը, գինդերէ, մանեակէ, և դժուարա-
գիւտ ճարմանդէ մը: — Պսակը կարկե-
հան քարերով և ուրիշ զարդերով զար-
դարուած է. գինտերն զարմանալի են
մեծագին տանձաձև ակունքներովն.
Իսկ մանեակը կը ձեանայ ոսկիէ փոքրիկ
ամենագեղեցիկ շրջանակներէ, որ ստէպ
կ'ընդհատին կարկեհանէ վարդիկնե-

րով: վերջապէս ճարմանդը որ զրահա-
ձև է, հիանալի արուեստական ներու-
թիւն մ'ունի, և այս ալ նոյնպէս կար-
կեհաններով կը փայլի: Եւ այս ամեն
բաներն պղնձէ ոսկէզօծեալ արկղի մը
մէջ դրուած են, որ զարդարուած է միւ-
սիոնական նկարներով. (տես երես 94):

Աւելորդ կը համարիմք ըսելն որ այս
ընծայն մեծ ընդունելութիւն գտաւ 'ի
Պետլին: Միայն կ'ուզեմք յիշեցնել որ
այս ընծայով Ումպէրդո նորութիւն մը
մըտուց գերմանական սովորութեան
մէջ. վասն զի 'ի Գերմանիա սովորու-
թիւն է որ կնքահայրը տղուն՝ ոչ թէ
մօրը ընծայ կ'ընէ:

ԵՌԱՄՍԵԱՅ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԵԼԻ ՊԱՏԱՀԱՐԱՅ

ՅՈՒՆՈՒՄԱՐ 1. — Իտալիոյ թագաւորը
տարեգլխի չքեղ ընդունելութիւնը կ'ընէ,
և Երեսփոխանաց ժողովը ներկայացնողաց՝
որ խորհուրդ կու տան խնայել անձին՝ կը
պատասխանէ թէ իր անձը փոյթ չէ, երբ
Իտալիոյ միութիւնն ու ազատութիւնը ա-
պահովեալ են:

— 2. — Ռօն զօրավարը սպարապետ
(մարաջախտ) կ'ընտրուի:

— 3. — Գուլիէլմոս կայսրը կ'ընծայէ
Պիզմարքի ականակուռ սև արծուէնչանը:
— Պետութիւնք եռանդեամբ յորդոր կ'ըլ-
լան Յունաստանի որ Լաւրիոնի¹ խնդրոյն
համար օտարազգի դատաւորութիւնն ընդ-
ունի:

— 4. — Նաբոլէօն Գե փամիշտադար-
ման քարահատութեան փորձն 'ի գործ կը
դրուի:

1. Լաւրիոնի խնդիրն՝ փռանկ-իտալական վա-
ճառականական ընկերութեան մը Յունաց աէ-
րութենէն հաւանութիւն ընդունած ըլլալով,
դաշնագրութեամբ հանդերձ՝ Մուէայի մէջ ե-
ղած Լաւրիոն երկրին մետաղահանքին մէկ մասը
(որոյ գլխաւոր հանքն է արծաթաքեր կապար)
բանեցընել 'ի շահ իրեն, և քանի մը տարիէն Յու-
նաց տէրութիւնը ձեռնարկութեան մեծապէս
շահաբեր ըլլալը տեսնելով և ուղած ըլլալով դաշ-
նագրութիւնը ջրէլ, ընկերութեան առ իրենց գե-
պանները գլխաւոր և օտարազգի դատաստանաւ
խնդրոյն արգարացի լուծումը պահանջէն է:

— 5. — Համալսարանի վիշնայէն 'ի Բո-
լոցք փոխադրուելու լուրը սուտ կ'ելլէ:

— 6. — Նաւարրայի զնդից և Պասդեան
նահանգաց հրամանատարութիւնը Մորիո-
նէս զօրավարին կը յանձնուի:

— 7. — Սերվիոյ զինուիլը կը լսուի: —
Յոյն նոր պաշտօնակալաց դասը կ'ամբող-
ջանայ:

— 8. — Անցագիրք ընդ մէջ Գաղղիոյ և
Բրուսիոյ կը վերցուին: — Շուվալֆ Լոն-
տրա կը հասնի:

— 9. — Նաբոլէօն Գ. կը մեռնի 'ի Չիզլ-
հերսդ:

— 10. — Փրանկիսկոս Տալ-Օնկարոյ ի-
տալացի բանաստեղծը կը մեռնի 'ի Նաբո-
ւի:

— 11. — Անդղիացի օրագիրք լիուլի կը
գովեն զմեռեալ կայսրը: — Վիէնայի ար-
քունիք տասնուերկու օրուան համար սուգ
կը մտնէ. Բրիտանիական արքունիքն՝ տասն
օրուան համար:

— 12. — Թիէր դարձեալ կ'ապահովէ
ղոգիս՝ հասարակապետութեան պահպա-
նութեան նկատմամբ: — Ի Մատրիտ մեծ
ցոյց և շարժումն կ'ըլլայ բառնալու համար
ղգերութիւնն 'ի գաղթականութեանց: —

— 13. — 1875ի համար ռուս հաշուէ-
կչիոն ընդունելի կ'ըլլայ, յորմէ կ'երևի թէ
մուտք առաւելագոյն են քան զեւս: — Ի
Ռուշճուգ Յունաց և Պուլկարաց իրարու
հետ զարնուիլը: — Սպանիոյ թագաւորը
զՍէրրանոյ կանչել կու տայ:

— 14. — Ռիքոդդի պաշտօնեայն դիւո-
լա Քաղէլլի զօրավարը կը զրկէ պաշտա-
կանօք հանդերձ 'ի Չիզլհերսդ, Նաբոլէօն
Գե յուզարկաւորութեան հանդիսակից ըլ-
լալու:

— 15. — Ի Հռովմ, 'ի Միլան և 'ի Պու-
րէշ փառաւոր հանգստեան պաշտօնք կը
կատարուին Նաբոլէօն Գե համար: — Պէլ-
քասդլ կը բողոքէ առ Երեսփոխանաց ժո-
ղովն Վէրսայլի՝ Պուրկուէնի հրաժարելուն
համար:

— 16. — Շամսուրի կոմսին և Օսլէա-
նեանց միութիւնը ապահով կատարուած
կը համարուի: — Սպանիոյ ծովային պաշ-
տօնակալն օրինադրութիւն կ'առաջարկէ
ծովային զինուորագրութիւնը եղծանելու
համար:

— 17. — Բրուսիական խորհրդարանին
նախագահը կը ջատագովէ Յանձնաժողո-
վոյն մտածութիւնը թէ՛ հռովմէադաւան
բարձրաստիճան եկեղեցականք պարտու-
րեալ ըլլալով հնազանդիլ Հռովմայ քահա-
նայութեան չանպատեղու են ընդդէմ տէ-
րութեան օրինաց: